

ՀԱՅՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՅ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ
ՏԵՐԱԽԱՐԱԳԻՐ — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.
202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէն կամ 10 ֆրանք.
Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն:



ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅՐԵՂԱՍԷՐ ՊԱՏՐԻԱՐԲ

(Հրատարակութիւն «ՀԱՅՔ»ի)

Entered as second-class mail matter. at P.O. New York. NY

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատկեր ներսէս Վարժապետեանի.— Հայ Եկեղեցականք
Եւ Ընտրութիւն Հայրապետի ամենայն Հայոց.— Ընտրութիւն
Մեծին Ներսէսի ի Կաթողիկոսութիւն.— Պատմութիւն Ամերի-
կայի Հայ Գաղթականութեան.— Նամակ Կ. Պոլսէն.— Նամակ
Ճավայէն.— Նամակ Քալիֆօրնիայէն.— Քաղաքական, Ազգային
եւ Տեղական լուրեր.

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ Բ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ա

Ժողովուրդ մի նման է հօտի եւ կարօտ է հովուի։
Գողովուրդն իւր սղջամիտ բնազդ մամբ միշտ կը խնդրէ
առաջնորդ, եւ գուցէ չպիտի երբէք լինի դար յորում
ամեն անհատ ինքնաբեր ապրի սրայէն պարտի եւ իշխա-
նութեան հարկ չմնայ այլ եւս։ Փղերու, գամէշներու,
վայրի ձիերու, կապիկներու երամակներն անգամ ու-
նին առաջնորդ կամ պետ։ Մարդկային վայրենի ցեղերն
ալ չեն առանց պետի։ Անիշխանականաց բարբառնալիքն
պիտի չգործեն երբէք ժողովուրդներն անկարօտ ընել
պետի — վարչապետի կամ քաղաքական գլխոյ, զօրա-
պետի կամ զինուորական գլխոյ, եւ Հայրապետի կամ
կրօնական գլխոյ։

Հայ ազգն քաղաքական եւ գինուորական կեանքէ
դադրած լինելով՝ ունի մէկ կարգի մէջ միայն պետ,
այսինքն եկեղեցական կարգին մէջ։

Կազմակերպեալ ազգային եկեղեցի մ'ունիմք, ե-
րէցներով եպիսկոպոսներով եւ մէկ եպիսկոպոսապետով,
որ է Կաթողիկոսն էջմիածնայ։

Եկեղեցական այլ եւ այլ աստիճանի պետերն մեր մէջ
չստ աւելի նշանակութիւն ունին քան Եւրոպական ազ-
գաց համար։ Հայ եպիսկոպոսն ոչ միայն վարչապետ է
այլ եւ վարչապետ՝ թէ եւ սեղմեալ սահմանաց մէջ։ Ժողո-
վուրդն եկեղեցական առաջնորդին կը նայի հոգեւոր,
կրթական եւ մարմնաւոր խնդրաց մէջ անխափ։ Երկար
դարերէ ի վեր այս այսպէս եղած է առ մեզ։ Մինչեւ
անգամ մեր ազգային եկեղեցւոյ առաջին դարերուն մէջ,
նոյն ինքն Արշակունի վերջին թագաւորաց օրով, եպիս-
կոպոսապետին դիրքն ու դերն եկեղեցւոյ սահմանէն
դուրս, քաղաքական կարգաց մէջ զգալի լինել սկսած
էր։

Երբ արշակունի իշխանութիւնն մարեցաւ, մնացին
նախարարութեանց պետերն եւ եկեղեցւոյ պետերն. եւ
այս երկու կարգի պետեր յաշտ ժողովրդեան գրեթէ հա-
ւասարագոր էին։ Բաղդին հարուածոց տակ հին նախա-
րարական ցեղերն հետ գհեալ աներեւոյթ եղան դժբաղ-
դաբար — դժբաղդաբար կ'առնէ վասն զի հին ազնուա-
կանութիւնն զօրութեան տարր մ'էր որ մեր ազգին ծո-
ցէն դուրս քամուեցաւ։ Բայց ոչ մի թշնամի զօրութիւն
կրնար եկեղեցւոյ կարգերն ջնջել, եւ օտարակրօն աշ-
խարհակալք Հայաստանի ստիպուեցան յարգել մեր ե-
կեղեցական նուիրապետութիւնն, որ միակ պահպանիչն
եղաւ մեր ազգային կազմակերպութեան, առանց որոյ
չեմք կրնար ըմբռնել թէ ինչպէս կարելի էր մեր ազ-
գին տեւել ապրիլ մինչեւ ցայժմ։ Այս մտօք է որ Հայ
եկեղեցին Հայ ազգութեան կապն եւ սպաստանարանն
կը նկատեմք, ինչ որ մեր մէջ գործող օտար քարոզիչք
դժբաղդաբար բաւական չեն հասկացած։

Բ

Ճիշդ այն պատճառաւ որ Հայ եկեղեցականին դե-
րքն առ մեզ անսովոր մեծութիւն ունի եւ բազմակողմ-
նի կարեւորութիւն, պէտք է որ նա առաւել ինամով
կրթուի եւ իւր դժուար պաշտօնին պատրաստուի քան

Եւրոպական կղերն։ Աւա՛ղ որ, ի բաց առեալ յարգելի
փոքրամասնութիւն մի չազազանց սակաւաթիւ, Հայ
կղերն յոյժ հեռի է իւր բարձր դերին հաւասարելէ։
Մեք անդէպ կը համարեմք հոս նկարագրել մեր եկեղե-
ցականաց իմացական եւ բարոյական աղբասութիւնն,
բայց չեմք կրնար չյայտարարել մեր այն խորին համո-
զում թէ Ազգին դժբաղդութեան եւ աղէտից քան զա-
մենայն հզօր պատճառն մեր եկեղեցականութեան ստո-
րին եւ ապրկար վիճակն է։

Օրինակ տանուք Պօլսոյ պատրիարքութիւնն։ Բազ-
դասենք զՆերսէս Վարժապետեան Պատրիարք Աջըգեա-
նի։ Երկուքն ալ ազգապետ են, երկուքն ալ Հայրապետ,
երկուքն ալ մի եւ նոյն պաշտօնական ստորագելիք ունին,
մի եւ նոյն միջավայրում կը գործեն։ Եւ սակայն ի՞նչ
անգունդ կայ երկուքին միջև։ Մին, Ներսէս, մտօք եւ
հազում մեծ, սրտով ազնիւ եւ բնաւարութեամբ հզօր,
համակրանք եւ պատկառանք կ'ազդէ իւր հօտին եւ մինչ-
եւ իսկ Սուլթանին. իւր բարձր տաղանդին եւ վեհ հո-
գեղին վերայ կը բարձրացուէ պատրիարքական գահն եւ
կուսայ այնմ նորօրինակ ոյժ եւ փառք։ Միւսն, Աջըգե-
ան, իւր անկորով եւ անթռիչ ծանրութեան ներքեւ կ'ըն-
կղձէ պատրիարքական գահոյն մինչեւ հասարակ ա-
ռաջնորդի մի աթոռին ցածութեանն։ Ներսէս, յետ այն-
քան անձնուէր աշխատութեան վեհանձն համերկութեան
եւ ներողութեան երբ կը տեսնէ թէ իւր բարձր տեսա-
կէտին դիմելու համար օժանդակ տարրեր կը պակսին
իւր շուրջ, հրաժարական կուսայ, նորէն եւ նորէն կու-
սայ, զի կը դգայ թէ Հայրապետական թագ առանց գա-
ւազանի անկրելի է։ Աջըգեան՝ չհրաժարի մինչեւ
անգամ երբ հրաժարէ՝ կ'ըսէ իրեն աղքատ, եւ երկու ձեռ-
քովն Հայրապետական թագն գլխուն վերայ կը սեղմէ,
աւա՛ղ, թէ եւ Սուլթանն անողորմաբար փշրած է նորա
գաւազան։

Ներսէս անցաւ Մեծին Ներսէսի, Սահակ Պարթե-
ւի, Շնորհալոյ եւ Լամբրոնացւոյ կարգն, Աջըգեան կը
մնայ փոքր եկեղեցական եւ փոքր մարդ։

Գ

Կաթողիկոսի ընտրութեան տանն եւս հարկ է որ
Ազգն յիշէ այս ճշմարտութիւն թէ գերազանց անձնա-
ւորութիւն մի կարող է Հայրապետական գահն փրկել
ոպառնացող վտանգներէ եւ մինչ իսկ նոր զօրութիւն եւ
փառք յաւելուլ անոր, մինչ հասարակ եկեղեցական մի
կարող է ընդհակառակն ենթարկել զայն խոնարհեցու-
ցիչ եւ ամփոփիչ ազդեցութեանց։ Ռուսական Հայաստա-
նըն արդէն աւելի կարեւորութիւն ունի ոյժմ, վասն զի
անդ Հայութիւնն թուով եւ ուժով կ'աճի։ Այսօր Թիֆ-
լիզն, յետ Կ. Պոլսոյ, Հայ կեանքի մեծագոյն կեդրոնն է,
եւ սրտի մի պէս սկսած է հետ գհեալ աւելի հեռուն
Հայ աշխարհին մէջ ցայտուցանել արիւն եւ հաղորդել
թնդիւն։ Մեր լուսագոյն օրաթերթերն հոն կը հրատա-
րակուին։ մեր բարձրագոյն զարգացման հասած գլուխ-
ներէն ոմանք հոն կ'ապրին. եւ հոն բուն Հայկական թաս-
րոնն եւս կը ներկայացուի։

Սերտենք ուրեմն Տաճկահայաստանն ու բոլոր Հայ
Աշխարհն Ռուսահայաստանի հետ կապող կապերն, եւ ջա-
նանք կաթողիկոսական աթոռոյն համահայկական հան-
գամանքն պահպանել, եւ անոր զօրութիւնն աճեցունել
իմաստուն ընտրութեամբ մի։ Ո՞վ է արժանաւորն։ Շատ
չփութելու եւ խլիլելու տեղի չկայ. արժանաւորք մասի
վերայ կրնան համարուիլ եւ արժանաւորագունից մասին
ալ դիւրին է համոզում գոյացունել բոլոր պարկեշտ
մտքերու մէջ։

Հազիւ հարկ է տանել թէ կաթողիկոսական գահուն
թիկնածուներէն Աջըգեան գլխովին անարժան է։ Նա
ինչպէս պատրիարքութիւնն ցածցուց, այնպէս ալ կա-
թողիկոսութիւնն պիտի ցածցունէ։

ՄԵԼԻՔԻՍԵՆԻՅԵՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ Կաթողիկոս լինելու յարմարագոյն եկեղեցականաց մին է, և մեք այնպէս կը հաւատամք թէ նա կարող է բազմաբղիւն հայրապետ հանդիսանալ: Ճշմարիտ է թէ նախորդ ընտրութեան ատեն եղած անհաճոյ դարձումսց վերայ շափազանց դայրացաւ Մելքիսեդեկ Սրբազան, բայց այդ բաւական չէ իւր արժանիք ոչնչացնելու:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԹԷԼ Եւ յոյժ ծես, տակաւին կաթողիկոսական պաշտօնին կոչուելու համար ոյժ ունի, և թէ Եւ յոյժ քննադատեալ՝ կարող է արժանապէս գրաւել հայրապետական դահն: Խրիմեանի հայրենասիրութիւնն ի վեր է քան զամենայն կառնած: Նա եղած է կէս դարէ ի վեր գլխաւոր գործիչ մի ազգային ասպարեզին վերայ: Սակաւք ունին նորա փորձառութիւնն և թերեւ ոչ ոք ունի նոյն աստիճանաւ Բայրաքարոյութիւն, որ Խրիմեանի մեծագոյն և յաւիտենական տիրութուն պիտի մնայ:

Իրաւ, Հայրիկն ալ ունեցած է քննադատողներ, նախ վասն զի սխալական էակ մ'է, երկրորդ վասնզի հայրիկ է: Այն խիստ քննադատութիւններ, տակայն, որք նորա պատրիարքութեան վերջին օրերուն մէջ երեւցան լրագրաց մէջ և որք դեռ վերջերս ալ ըստ մասին կըրկնուեցան, ըստ մեզ անարդար են: Եթէ Հայրիկ է՝ ինչ որ դուք կ'ամբաստանեն լինել, թող մանրամասնեալ և հզօր փաստերով ցուցնեն, և վար ձգեն զԽրիմեան այն աթոռէն յորում նա կը բազմի Հայութեան սրտին մէջ: Բայց եթէ չեն կրնար զայդ ընել, թող օգնեն նմա բազմիլ հայրապետական գահոյքն էջմիածնի:

Ազգային քաղաքականութեան սկզբունք պէտք է լինի մեզ բարձրացունել անունն և արժանիքն անժամաւոր եկեղեցականաց որք այնքան սակաւաթիւ են մեր մէջ, գիտնալով թէ այդ հազուագիւտ անձնաւորութիւնք կարող են փրկուէալ այնպիսի՝ գեր կատարել Ազգին մէջ զոր աշխարհական դասէն ոչ ոք կրնայ:

Հ Ա Յ Ո Ց Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ն Է Ն

ԴԱՍ ՄԻ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՆԵՐՍԷՍԻ

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Արշակ Բ. ի թագաւորութեան երրորդ տարին նախարարք, զօրավարք և սահմանապետք Հայոց ընդհանուր ժողով ըրին յարքունիս և ձառնարկեցին կաթողիկոսի ընտրութեան: Ընտրելիներ ոչ սակաւ էին եկեղեցականաց մէջ, բայց ժողովն գինուորական Հայ մի արժանաւորագոյն համարեցաւ հովուապետական ցուպն կրելու: Այս գինուոր Յուսիկ հայրապետին թողն էր, որ ի կեանքին կրթութիւն առած և յետոյ Կ. Պօլիս գնալով Ասպիոն անուն իշխանի մի գտտեր հետ ամուսնացած էր: Վերադառնալով ի Հայաստան՝ գինուորական ասպարէզն ընտրած և բարձրացած էր արքային սենեկապետ լինելու փափուկ պաշտօնին: Պոլսոյ մէջ արքունի և իշխանական արարողութեանց հանդիսատես և մասնակից եղած լինելով՝ այս Հայ գինուորն կարող էր Հայ արքունեաց մէջ բարեկարգութիւններ մուծանել և ամեն ինչ ճաշակաւ և կարգաւ տնօրինել:

Այս գինուորի անունն էր ՆԵՐՍԷՍ:

Արքունեաց մեծամեծներն և նախարարք շատ առիթ ունէին Ներսիսի հետ խօսակցելու և նորա կորովի բնաւորութիւնն և բազմազմուտ զարգացումն գնահատելու: Կեսարիոյ և Բիւզանդիոնի կրօնական և քաղաքային հաստատութեանց վերայ ինչէ՛ր կը պատմէր և ի՛նչ թելադրութիւններ կ'ընէր նա Հայոց աշխարհին համար, և ո՛րքան բանիմաց աւագանւոյն տեսակետներն

ընդ կը բարձրացունէր և եպիսկոպոսաց ալ վարչական գաղափարաց հօրիզոնն կ'ընդարձակէր նա այսպէսով:

Ներսէս յալթանդամ, բարձրահասակ և վայելչագէմ էր: Այսպէս նա գերազանց անձնաւորութիւն մ'էր յաջս բանակին և յաջս իշխանաց իրրե յունական մշակութիւն առած մարդ, իրրե վսեմ Ֆիդիքական կազմութեան տէր և քաջակիրթ զինուոր, և վերջապէս իրրեւ այր բարեպաշտ, արդարադատ և մարգասէր:

Կաթողիկոսի ընտրութեան ժողովոյն մէջ Ներսէս ներկայ էր իւր զինուորական զգեստով զգեստաւորած, թերեւ այդ վսեմ հանդիսաւորութեան առթիւ աւելի ճաշակաւ և խնամով քան զսովորականն: Եւ իրրե առաջին թիկնապահ կայր Արշակայ քով: Բոլոր ատենան սկսաւ գոչել. «Ներսէս» լիցի մեր հովիւ:»

Ներսէս բողոքեց իսկոյն այդ առաջարկի գէմ, ցույնելով զանձն իրրե անարժան: Ժողովականք կը պընդէին:

Յայնժամ Ներսէս սկսաւ խօսիլ իւր տկարութեանց վերայ, և բաւական չափազանցօրէն նկարագրեց իւր անարժանաւորութիւն, զիտմամբ վերագրելով ինքն իրեն այնպիսի մեղքեր յորոց ամեն մարդ ազատ գիտէր զնա: Ատենան և թագաւորն ինքնին այնքան յայտնի կը տեսնէին Ներսէսի մեղաց տարապարտ և հաշուեալ խոտովանութիւնն որ սկսան խնդալէն մարիլ:

Զօրքն կը շարունակէր ազաղակել թէ զՆերսէս մեղաւորն կ'ուզեն հովուապետ:

Արշակ չկրնալով այլ ևս համբերել Ներսիսի յամառ գիմադրութեան, հրաման տուաւ բռնի մերկացունել զնա թիկնապահի պատմութեանէն, երկայն հերքն կտրել, և եկեղեցական հանդերձներն զգեցունել նմա: Հրաման ըրաւ որ փառասոս ծերունի եպիսկոպոսն անմիջապէս ձեռնադրէ զՆերսէս ի տարկաւագութիւն: Յետոյ եպիսկոպոսներն ևս ի ժողով կոչեցան և նոքա ևս զինուորականաց հետ միաձայնութեամբ հաւանեցան առաջարկին:

Հայ իշխաններէն ութն ուղեկից տրուեցան Ներսիսի, որ փառօք գնաց ի կեսարիա և ձեռնադրուեցաւ Եւսիրիոս կաթողիկոսն:

Ներսէս մեծ հանդիսաւորութեամբ ընդունուեցաւ Արշակայ և իշխանաց կողմանէ երբ ձեռնադրուած վերադարձաւ: Եպիսկոպոսաց ընդհանուր ժողով գումարեց և կարգ մի հրահանգներ տուաւ, և շինուելիք հիւանդանոցներու, Եւսարանոցներու և մենաստանաց մասին կարգադրութիւններ եղան և գլխաւոր տեսուչներ կարգուեցան: Որոշեցին որ նախարարաց մէջ մերձաւոր խնամութիւնք այլ ևս տեղի չունենան, ինչ որ ցայնժամ յաճախ կ'ընէին ժառանգական նկատողութիւններէ առաջնորդուած: Ուրիշ որոշում մ'ալ այն էր որ մեռելոց վերայ անձնագոծութիւններ այլ ևս չթոյլատրուէին ըստ հեթանոսական հին սովորութեան:

Ներսէս հայրապետի բազմաբղիւն գործունէութեան և շինութեանց պատմութիւնն և նորա քաղաքական դերն իրրե լիազօր պատգամաւոր, աքսորն, նեղութիւններն, վերջապէս թունաւորմամբ վախճանին ազգային թագաւորի ձեռամբ՝ չունիմք պատմել աստ:

Այսչափ ալ հերիք է յիշեցունելու համար թէ մեր ազգային եկեղեցւոյ հնագոյն սովորութեանց համեմատ կաթողիկոսն կրնայ լինիլ ու է Հայ — մինչեւ իսկ զինուորական և ամուսնացեալ Հայ մի — եթէ հայրապետական բարձր պաշտօնին համար պահանջեալ կրթական և բնաւորական բարեմասնութիւններն բարձր չափով կը բարդէ յանձին:

Մեծին Ներսէսի խոնարհ և անկեղծ հրաժարումն յընտրելիութենէ թող օրինակ լինի մեր փառասէր եկեղեցականաց որոց ոմանք — և անարժանաւորագոյնք — այնքան եռանդեամբ և անարժան միջոցներով կը հնարին ընտրուիլ կաթողիկոս:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. Տես Թիւ 4դ.)

Մինչև 1870 թ. մօտերն Ամերիկա եկող Հայերն Պոլսեցի կամ Պոլսոյ դրացի քաղաքներէ Էին ընդհանրապէս. մեծ մասամբ ուսանողներ բժշկական՝ աստուածաբանական կամ դիտական, փոքր մասամբ ալ արհեստ ուսանելու կամ անկախ գործի հետամտողներ:

Այդ առաջին շրջանի մէջ, մինչև անգամ պաշտպան ունեցողներուն համար, յանդուգն ձեռնարկ կը համարուէր Ուիլիամսոն անցնիլն, բայց յետոյ տակաւ վարժուեցան աչքեր և գաւառներէն ալ սկսան գալ:

Ասկայն թիւ Հայեր Ամերիկայէն Հայրենիք վերադարձած էին յաջողեալ, և սակաւք էին դեռ Արեւելքի մէջ ալ յաջող դիրքեր գրաւողներ շնորհիւ իրենց ամերիկեան արհեստագիտութեան, և սակայն այդչափն ալ բաւական էր բազմաց ներշնչելու Ամերիկան տեսնելու տենչն, և որոնք որ հնար գտան գալու՝ եկին:

Ասկայն և այնպէս գաղթականութեան հոսանք կողմէն չարժանի շարժումն այն ատեն միայն սկսաւ երբ գաւառաց մէջ իմացան Հայեր թէ կարելի էր Ամերիկայ գալ և դրամաշահիլ առանց արհեստ գիտնալու, առանց ոնգողիքէն խօսելու և առանց դրամազլիտոյ — աշխատիլ իրեն պարզ գործաւոր ի գործանոցս:

Յայնժամ սկսան Հայեր Խարբերդի և Տիգրանակերտի կողմերէն գոնդագոնդ գալ — վազել:

Վերջին ութ քարիներու մէջ է մանաւանդ որ այս գործաւորական գաղթումն սկսած է դէպ ի նոր Աշխարհ: Հայոց թիւն մի քանի հարիւրէն այժմ բարձրացած է 4500 թ.:

Ի՞նչ կ'ընեն այս Հազարաւոր Հայեր, Ի՞նչպէս կը ապրին, ի՞նչ յաջողութիւն կը գտնեն և որպիսի ապագայ կը սպասէ սոցա — այդ կը մնայ այժմ քննել:

Ունիմք մի քանի գործանոցատեղեր, հողատեարք և երկրագործք, վաճառականներ, արհեստաւորներ, ագատական ապարհզի մարդիկ, գործաւորներ և ուսանողներ:

Առնցժմբ այս գաղթող Ժրաքանջիւրն առանձինն:

1

ԴԱՐԾԱՆՈՑՍԻՐԵՐ

Այս գլխոյ տակ քիչ ասելիք կայ, Ամերիկայի Հայոց մէջ արտադրողներ քիչւոր են դեռ: Ունիմք հինգ հոգի որք համեստ գործանոցի տէր են և տեսակ մի գործ կը շինեն, Կոթ այս երկրի գիւղացիներն կը գործածեն: Ասոնց մէջ նշանաւոր է Յարութիւն Իսկեան, որ Նիւ Եորքի մէջ ունի իւր գործանոց և բազում Հայեր գործ և ապրուստ գտած են անդ իրենց անճարակ վիճակի մէջ: Սորա եղբայրն, Յակոբ Իսկեան, նոյն գործով հաստատուած է «Ճէրսի Միթի Հայց» կոչուած տեղն, որ Նիւ Եորքէն չափ հեռի է: Հոն են նաև Կիւլեան եղբարք, — չորս եղբարք — և Յարութիւն Բիւրքեան, որք բազմապատկար Նոր Էն այս գործոյն մէջ: Իսկ Պօղոս Սարգեան, ի Նիւ Եորք, շատ տարիէ ի վեր այս գործով կը զբաղի: Այս հինգ տոմներ առաւել կամ նուազ յաջող են, և ունանք հարստացած կամ հարստանալու ճամբուն մէջ:

Կայ նաև Տր. Մարգար Տատրեան արտադրիչներու փոքր ցանկին մէջ: Սա 1868 թ. եկած է Ամերիկայ և բժշկութիւն ուսած և 1871 թ. վերադարձած է ի Կ. Պոլիս: Մինչև 1884 պնդ բժշկութիւն ընելէ յետոյ նորէն եկած է ի Նիւ Եորք՝ ընտանեօք: Կեանքայիններու յատուկ եղող փափկահուպ ճարտարութեամբ միջավայրն քննե-

լէ յետոյ՝ հայկական մածուկն իրեն անդարար դարման Ամերիկացւոց մէջ գործածելի ընելու գաղափարն յղացած է: Մի քանի տարի առաջ մածոյ վաճառականութեան մենաշնորհն ստացաւ կառավարութենէն և արդէն չափով իւր ծանօթ է արեւելեան այս արտադրութիւն Ամերիկայի շատ բժիշկներուն, և տկար ստամոքս ունեցող Ամերիկուհիներուն:

Տր. Տատրեան ունի աւելի նոր և աւելի կարեւոր արտադրութիւն մի — մածոլ — որ մածոյ իւր ըսել է, և մածոյ և ձկան իւրի խառնուրդ մ'է: Անթիւ են այն խառնուրդներ որք ձկան իւրի անհաճոյ համն զգայուն ստամոքսաց ընդունելի գործելու նպատակաւ յօրինուած են: և մեք ամեն օր առիթ ունիմք նոր խառնուրդ մի ճաշակելու որ մեզ կը ներկայացուի յօնինոց բժշկաց կողմանէ: Տատրեան խառնուրդն լաւագոյն և բաւին բուն նշանակութեամբն համեղագոյն է քան զամենայն, և մեք կը հաւատամք թէ այդ պատուական խառնուրդ պիտի կրնայ հանրածանօթ լինիլ և իւր յօրինողն միլիոնատէր մ'ընել ժամանակաւ: Դրամագլխոյ տէր Ամերիկացի մի, տարին 100 հազար թալէն ծանուցման համար ծախսելու կարող ամերիկացի մի պիտի յաջողէր այսպիսի ցանկալի խառնուրդ մի տիեզերահաշակ ընել յընթացս երկու կամ երեք տարիներու: Բայց Տատրեան ստիպուած է ծանրաշարժ քայլերով յառաջանալ:

Ընթերցողք կը տեսնեն թէ հայ գործանոցատեարք կարի աննշան են թուով մեր մէջ: Պէտք է զարմանալ սակայն: Շատ աւելի բազմաթիւ պիտի լինէին այնպիսիք եթէ դրամագլխոյ բացակայութիւնն արդեւ չլինէր: Ամերիկա եկող Հայերն դրամագլուխ չեն բերեր ի միասին, ստիպուած են հոս նախ աշխատիլ տարիներով և փոքրիկ դրամագլուխ մի ստեղծել. ինչ որ ինքնին շատ դժուար է և սակաւուց բաղդն: Եղած են նաև ումանք որ այս կերպով դրամագլուխ հայթայթելէ յետոյ ձեռնարկած են գործանոց հաստատելու, բայց վերջապէս վրիպած են: Չթաթէսեան յիշած եմք արդէն, որ չաքարագործութիւն ըրած է: 1870—71 թ. Գառնիլի Իւթիւճեան ևս չաքարի գործանոց հաստատեց, խաղողի չաքար շինելու: Այս անձ եղբայր էր Պատ. Սիմէոն Իւթիւճեանի, և հոս երկրագործութիւն և աստամբուրժուութիւն սովորած, խալի գործած և 10 հազար թալէնի չափ զլամագլուխ դիզած լինելէ յետոյ էր որ չաքարագործութեան սկսաւ Պետրոսեաններու հետ ընկերութեամբ ի Պրուքլին: Ձեռնք եւ Գերման պատերազմին պատճառաւ խաղողի չաքարն Փռանայէն բաւական չէր կրնար ներածուիլ Ամերիկա, խնդրանքն մեծ էր և Իւթիւճեան և ընկ. մեծ յոյս ունէին յաջողելու, բայց իրենց յաջողութիւն տեսական չեղաւ և վերջապէս վրիպեցան: Անկէ յետոյ է որ շրուպ շինելու գործանոց մի հաստատեցին ի Պոսթըն, կարծեմ Իւթիւճեանի նախկին ընկերներէն ոմանք, և սակայն նորէն վրիպեցան:

2

ԱՆԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՌՈՐՆԵՐ

Մեր հայ գործաւորաց անհուն մեծամասնութիւնն դասապարտեալ է գործաւոր մնալու: Եղած են սակայն ընտիրք ոմանք որք գերազանցելով իրենց ամերիկացի ընկերներ՝ բարձրացած են գործաւորաց գլուխ լինելու: Նշանաւոր օրինակ մ'է Պօղոս Յակոբեան որ ելեքտրատիպ պատկերագործութեան կարեւոր գործանոցի մէջ գործաւորաց պետի աստիճանին բարձրացաւ իւր տաղանդին շնորհիւ, այդ դիրքի մէջ տարիներ մնալէ յետոյ՝ վերջերս՝ առանձին արհեստանոց մի հաստատեց ընկերութեամբ Բիթապեանի, ի Նիւ Եորք թ. 3, Կրէյթ ճօնս փողոց: Պօղոսեանի արհեստն լուսանկարչութենէ, փորագրութենէ և տպագրութենէ միանգամայն կը բաղկանայ: Պատկերի օրինակ մի տուեալ լինելով՝ պարտի նա անոր ճիշդ օրինակն հանել մետաղի վերայ և պատշաճապէս պատրաստել զայն մամլոյ տակ դրուելով տը-

պագրուելու : Օրական թերթեր անգամ պատկերազարդ գրքերու նման են այժմ այս երկրին մէջ , և պատկերաց մետաղեայ տախտակներ պատրաստելու արհեստն ահագին համեմատութիւններ առած է այս երկրին մէջ :

Աղէքսանդր Զենոբ , Պոլսեցի , նշանաւոր գծագրիչ է : Սա 1871ին եկած է Ամերիկա , և իբրեւ գծագրիչ 7 տարի Տէլի Կրաքիք լրագրին համար աշխատելէ յետոյ վերադարձած է հայրենիք , այցելած է Եգիպտոսը , և 1881ին վերստին գալով ի Նիւ Եորք հաստատուած է իբրեւ անկախ արուեստագէտ : Իւր աշխատանքըն է ի թ . 150 Նաոս Փողոց : Գրչաւ և մեկնով կը գծէ , և իւր մասնաւոր ճիւղն է մարդոց լուսանկար պատկերներն օրինակել թերթերու համար : Իւր գրչէն ելած գծագրութիւնք սքանչելի են , և կարծեմք իրաւամբ կը նկատուի իբրեւ մին ի ճարտարագոյն գծագրչաց Ամերիկայի :

Զենոբ ի Պոլիս աշակերտած էր յոտս Տելեմաք Էքսէրճեանի , որ ևս Ամերիկա գալով նախ ի Պոսթըն ապա ի Նիւ Եորք պատկերահանի արուեստն շարունակեց , և ներկայէս եօթն ամիս առաջ մեռաւ թոքախտէ : Տելեմաք Էքսէրճեանի եղբայրն , Գառնիկ Էքսէրճեան կը վայելէ նոյնպէս վարպետ պատկերահանի համբաւ , և բաւական տարիներէ ի վեր հաստատուած է ի Պոսթըն :

Փափուկ և խնդրեալ արհեստ մ'ալ Սահակ Արսէնինն է որ իբր հինգ տարի առաջ Ռուսահայաստանէն եկած է Ամերիկայ և վերջերս անկախօրէն սկսած է գործել իւր ոսկերչութեան անհետն ի թ . 39 Մէյտըն Լէյն Փողոց , Նիւ Եորք : Արսէնի մասնաճիւղն է ժամացոյցներու տիփիկներն զարդարել ոսկեղէն և արծաթեղէն գոյն գոյն ծաղիկներով և ձեւերով , յորում արդէն իւր հազուադիւս ճարտարութիւն սկսած է ճանչուիլ ժամացուցի մեծ վաճառատանց ոմանց քով , և մեծ յոյս կայ որ փայլուն յաջողութեան հասնի մեր այս հայրենակից ևս :

Նիւ Եորքի մէջ այժմ չորս հայ կազմարարներ կան : Սիմիսեան և Զաքէոսեան ընկերութեամբ հաստատուած են , Շալճեան , Այվասեան առանձին խանութներ ունին , Սարգիս Թէրզեան և իւր որդի ալ ի միասին կը պարապին նոյն գործով : Կ'ըսուի թէ ասոնց ամենն ալ վարպետ կազմարարներ են և իրենց ապագայն յուսափայլ է :

Ունիմք նաև հայ դեղագործ մի , Հայկազուն Տատրեան , որդի բժշկապետ Տատրեանի : Տատրեան դաղարանն իբր երեք տարի առաջ հաստատուած է և յաջողութեամբ կը շարունակէ իւր գոյութիւն այսպիսի մեծ քաղքի մէջ ուր դեղարանաց թիւն չափազանց շատ է :

Տանպըրիի մէջ (ի Բոնէքթէքը) կայ երիտասարդ Չոփուրեան որ սիկարայի կամ սիկարէթի գործանոց մը ունի մի քանի տարիէ ի վեր : Երէց Չոփուրեան ալ հոն խանութ ունի իբրեւ վարպետ դերձակ :

Ուսթըրի մէջ Տ . Մ . Շուշանեան կայ , մի քանի տարիէ ի վեր իբրեւ վարպետ կօշկակար հաստատուած :

Նոյնպէս Ուստըրի մէջ կայ Գեւորք Առաքեւեան , շինող գործաւորաց վերարկուի , բայց երկու երեք ամիսէ ի վեր դադարած է գործն դժբաղդ հեղեհի մի հետեւութեամբ :

Պոսթընի մէջ կայ Առաքեւեան , որ բազում տարիներէ ի վեր կարեւոր տպագրիչ է , և ունի իւրուորոյն տպարան ամերիկեան զարգացեալ պայմանաց մէջ :

Հայրենակից

ՆԵՄՆԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս 7 Փետր . 1892

Բարեկամ ,

Սրբազան Պատրիարքն անակնկալ , ես ըսեմ տրկարութեան դու ըսէ քաջութեան՝ ցոյց մ'ալ ըրաւ Պէշիկթաշի քարոզիչ արքեպիսկոպոսն դադրեցունելով

իւր եկեղեցական պաշտօնէն : Պաշտօնապէս յայտարարուած չէ թէ ի՞նչ է խորէն սրբազանի յանցանքն , մեղքըն կամ ոճիրն : Կը գրուցուի թէ ի Փարիզ գտնուող եղբորորդւոյն հետ թղթակցութիւն , լուրեր հաղորդեր է Տաճկաստանի վրայ . բայց այդ կը գրուցուի որպէս զի հետաքրքիրը հանդարտին և աւելի խորն չփնտռեն :

Ըսեմ քեզի բուն բանն ինչ է :

Գիտէք թէ խորէն վեց եօթն անուններ ունի բաւական անախորժալուր : Այդ անախորժալուր անուանց է'ն անախորժն Լուսինեան անունն է : Բան զայդ աւելի գրգռիչ և գայթակղեցուցիչ անուն կրնայ լինիլ : Լուսինեան , մեր վերջի թագաւորի անունն , մեր քաղաքական փառաց և փայլման վերջին ճառագայթն աղօտ՝ սակայն և այնպէս ոմանց անտաւոր աչքերուն համար վիրաւորիչ սաստկութիւն ունեցող ճառագայթ :

Այդ գայթակղական լուսով փայլող անուան հետ եթէ կցուին գայթակղական գործեր : Եթէ այդ անուն կրող անձին գրչէն ալ լոյս ցայտէ . եթէ Լամարթինի և Հիւկոյի հետ թղթակցած լինի , և իբրեւ բանաստեղծ ի նոցանէ պատուեալ լինի . եթէ ճիշդ այս վերջերս , այսպիսի փափուկ ժամանակներ , Փարիզեան թերթեր զնուդրուատեն իբրեւ քաղաքագէտ , զնա յոչեն իշխան կամ իշխանագն արքեպիսկոպոս . — Պալատն չհարցնէ՞ թէ այս ամենն ի՞նչ կը նշանակեն :

— Սրբազան , փարիզեան այս հրատարակութեանց համար դուք տեղեկութիւն կամ նամակի օրինակներ չհաղորդեցի՞ք :

— Ես այդ հրատարակութեանց հեղինակ կամ քաջալերիչ չեմ եղած :

— Բայց դուք Լուսինեան կը կոչէ՞ք զՁեզ . իշխանազն է՞ք թէ չէք . Լեւոն Թագաւորի սերունդն է՞ք թէ չէք : Պապասխանեցէ՞ք :

— Դու ասացեր :

— Ա՛ . ի խաչ պէտք է հանել զքեզ :

Բայց մեր անհուն և անսպառ գթութեամբ կը հըրամայեմք որ ի խաչ չհանուիք , այլ Պատրիարքն զձեզ կրնայ դադրեցունել ձեր եկեղեցական պաշտօնավարութենէն :

Բ . Դուռն աւելի դիւրզգայ եղած է Լուսինեաններու նկատմամբ այս վերջերս , ոչ առանց Կատաճառի : Անշուշտ պատճառ որ կ'ըսեմ , պէտք է հասկնաս անանկ բան մի որ պատճառի գորութիւն ունի կասկածոտ և չափազանցող մտքի համար :

Պալատն եւրոպեան պետութեանց ոչ մէկէն անշահախնդիր համակրութիւն կ'ակնկալէ : Անգղիա իւր լիովին վարձքն առած է և կ'առնու : Նոյնպէս միւսներն : Ֆրանսա հզօրացած է և իւր ազդեցութիւն աւելի ըզգալի է այժմիկ ի Կ . Պոլիս : Գրօնշթաթի ցոյցն մնայուն ազդեցութիւն մը յառաջ բերաւ : Ֆրանսա կ'աշխատի նորանոր միջոցներով աճեցունել իւր ազդեցութիւն յԱրեւելու : Ահա Ֆրանսական մարտանաւերու խումբ մի մեր շուրջ հսկելու պաշտօնին յատկացուեցաւ անցեալներ : Ի հարկէ այդ նոր գորութիւնն ինքզինք չօգտիւնի պիտի ընէ երբ առիթ լինի : 1861ին առիթ մ'եղաւ և յայնժամ Ֆրանսա զրաւեց Սիրիան . բայց քիչ ժամանակէն քաշուեցաւ : Թող նորէն խռովութիւն մի ծագի այն կողմեր , Ֆրանսա նորէն ոտք կը դնէ հոն , և այս անգամ անդղիական փութով ոչ թէ Ֆրանսական՝ անկէ դուրս կ'եղնէ — այսինքն բնաւ չեղներ : Արդէն Սիրիան բարոյապէս կէս մը Ֆրանսացեալ է . Պէյրութի մէջ Արաբն Սրարին հետ անգամ Ֆրանսերէն կը խօսի յաճախ առեւտուրի մէջ :

Ենթադրենք վայրկեան մի թէ այդպիսի Ֆրանսական զրաւում մը տեղի ունենայ : Սիրիոյ սահմանակից է Կիլիկիա , հոն է Զէյթուն . և Հայաստան ալ շատ հեռի չէ : Հայկական ինքնօրէն նահանգ մը , հայ իշխանապետութիւն մը Ֆրանսացւոց դրացի և Ֆրանսական թեւարկութեան ներքեւ , թէև հարկատու Դրան , կ'երե-

էի նուազ այլանդակ պատահականութիւն: Մանաւանդ թէ ֆռանոս կրնայ հայ իշխանապետութեան համակրութեանն աւելի վստահիլ Լուսինեաններու ցեղային հանգամանքն ալ նկատելով:

Կ'երևի թէ փարիզեան թերթերու ոմանց յօդուածներն Լուսինեաններու մասին, և թան լրագրի աչքի դարնող և անսպասեալ յաւելուածն Հայաստանի և Հայկ. ինքրոյ վրայ՝ կասկածներ արթնցուցին մեր պալատի մէջ: Պալատն ալ եւրոպական բոլոր պալատներուն պէս գիտէ թէ իշխանի մը սերունդն իշխանութեան մը վերահաստատման աւելի կը ծառայէ տակաւին մեր ժամանակներն քան թէ տան բարոյական պատճառներ:

Ալ զարմանալի՞ է եթէ Լուսինեան Սրբազանին վրայ խոստում նայի պալատն և վերջապէս իւր անսահման գթութիւնն անոր ալ ցուցնէ:

ԱՆԵՐԵՆՈՅԹՆ

ՆԵՄԵԿ ՆԵՎԵՅԻՆ

8 Յունի 1892

Մեծապատիւ Խմբագիր,

Ոչ սակաւ ցաւօք սրտի է զի հարկադրման եմ արտայայտել թէ միջոց ժամանակէ մը ի վեր մեր հայ բնասիրական լրագրութեան ոմանք կատաղաբար յարձակեցան միմեանց ընդդէմ, և անսիրտ բառից յորդուեցին թափեցին մին միւսին վերայ իւր ի պաշտպանութիւնն անձին: Ոչ այսչափ միայն, այլ և բազմիցս կարդացին և կարդում ենք տակաւին Շարլաթան և Վալսակ անուանակոչութեամբ մակագրելով նոցա, ի ճանաչումն կամ յերախտագիտութիւնն նոցա ազգին արած ծառայութեանցն: Չեմ կարծում թէ մեր հայրենասիրական լրագրութեանց ունիցէ մին արժանի է այսպիսի մակագրական անուան, այլ և համոզուած եմ թէ հայրենակիցներէս մեծ թիւ կայ որ կը գնահատէ անհատաբար սոցա մեր թշուառ հայրենիքին մատուցած ծառայութիւններն, թէ՛ հայրենեաց, թէ՛ գաղթական, թէ՛ քաղաքական, թէ՛ դիւանագիտական և թէ՛ ունի իւրն յատուկ ծրարագրի հետեւութեամբ, լրագրաց մէջ ամէն մասնագիտաց կարեւորութիւն կայ գէթ ըստ մասնեայ առ ի զօրավիզն լինել, ուժ տալ մի անկեալ ազգի յոտին կանգնեցուցանելոյ, և մեք չեմք կարող ապերախ գտնուիլ այս ճշմարտութեանց և կամ իւրեանց տարածողի գործէրին:

Թէ ամենքն իւրեանց սխալմունքն և թերութիւնն ունին և ենթակայ են քննադատութեան, այդ ոչ ոք կարէ կամ կամի երկբայել, և ես կը պնդեմ թէ առանց տեսակէտք տարբերութեան՝ չեմք կարող ողջախոհ քննադատութեան մտանել:

Այդ տեսակ կրետիկներ, չորս նշանակեալ լրագրաց մէջ մերթ ընդ մերթ ընթեռնում ենք, տեղիք են տալ ման հաւատալոյ ինձ և ինձ նման բազմաց թէ ազգային — ազգակործան — նախանձն գործօն և գլխաւոր դեր է կատարում, և թէ մանաւանդ թափուր չեն այնպիսիք անձնական խիստ ստոր և պարսաւելի ատելութեան: Այն ինչ շատ փոքր արդարացի քննադատութիւն կը տեսնեմ որ բողոքէ երեւակայութեան:

Մատգրութիւն չունիմ բնաւ որոշ խօսել կամ նշանացի առնել այսու առթիւ այս կամ այն լրագրութիւն վայելելու արարքն, այլ հաւաստի եմ զի այսօրեայ ազգօգուտ հայերէն լրագրաց ամեն ունիմ և իրաւախոհ ընթերցողի եզրակացութիւնն կը համաձայնի իմոյն, այսինքն իսկական ծրագրիցն չեղելով և անձնաւորութեանց ընդդէմ յարձակելովն դատապարտելի է:

Ուստի պարտէ բացէ ի բաց հերքել այդ տեսակ անարգ լեզու և վատահամբաւութեան անուն գոր գրեն և տան ոմանք յազգասիրաց մեր այնպիսի հայրենասէր, և գործունեայ և բազմաշխատ անձանց որ կը փութան յօգնութիւն սկսեալ բարի գործոյն մէջ. մրցման դաշ-

տին մէջ պարտուպատշաճ է այսպիսի աշխատակից եղբարց ձեռն կարկառելով բարեաւ եկիր, առձայնենք. սոքա յաւէտ արժանի են ընդհանրութեան քաջալերութեանն. մեր անկեղծ աջակցութիւն պարտաւոր ենք նուիրել նոցա. արժան է վերջապէս այս բարեսէր շաղաւն ընթանալ մեր տարաբաղդ ազգի յառաջդիմութիւնն ապահովուելու նպատակն ունենալով քան թէ ընդվարարանել և միմեանց ջանալ անարգ՝ անընդունակ ներկայացնել:

ՉԱՅՆ ՄԻ ՅԱՐԵՆԵԼԻՑ

ՆԵՄԵԿ ՎԵՂԻՓՈՐՆԻԷՆ

Սան - Ֆրանսիսքօ 17 Փետր. 1892

Ազնիւ ընթերցողք «Հայք» լրագրի,

Ներողութիւն խնդրած եմ խմբագրէն գէթ մի սիւնակ մեզ շնորհել յայտարարելու Ձեզ Հայ եղբարցս Տըրապիզդի մէջ գտնուած երկու կողպատիչներու մասին:

Առանց անցագրի և բաշարորդի երգչկայ քաղաքէն մեկնեցանք ես և ընկերս Գէյլ ի Տրապիզոն, Ամերիկա անցնելու համար չունենալով բարեկամ մը որ մեր նաւի թիքէթներն հանելով ճամբէր զմեզ, աստ և անդ հարցուցինք, և մեզ առաջարկեցին թէ Ձեռք ի ֆէնտին այդ գործն կատարելու կարող անձ մ'է դիմեցինք անոր խնդիրն իմացուցինք, և նա անմիջական կերպիւ պատասխանեց թէ այո՛ արդէն ատիկա իմին գործն և պաշտօնն է և ոչ ուրիշին:

Իսկ մենք բոլորովին և մանաւանդ կառավարութեան վախճալով յանձնուցանք իրեն իւր հաւատարիմ և անձնուէր գործիչի մը, որ մեզի մինչեւ Մարտիի թիքէթ հանէ. քովերին ունենալով 16 տկան սուկի: Երեկոյ մը եկաւ և ըսաւ որ վճարեցէք ինձ 15 Օսմ. սուկի որ թիքէթներն հանելով վաղն զրկեմ, իսկայն վճարեցինք կարծելով որ ցՄարտի 7 ու կէս սուկի է մէկ անձի համար. յաջորդ օրն տեսնելով զմեզ ըսաւ թէ Ձեր նաւ գացած ժամանակ Ձեզ կը Յանձնեմ. որ մի գուցէ թիքէթին մէջ նայելով գիտնանք Յու կէս Օսմ. սուկի լինելը: Կը տեսնէ՞ք սա խարդախին վատ գործն. քիչ վերջ հանդիպեցանք Երգչկայի հաճի Մարտիրոս Ազաբարեանի որ տեսնելով զմեզ ճանչցաւ. խնդիրն նորա իմացուցինք, նա ալ խորիտարար պատասխանեց մեզ թէ դուք չէք գիտեր որ հաճի մարտիրոսն վալիի ստըն համբուրած է արտօնութիւն ստանալու, Հայերն Ամերիկա զըրկելու. քանի՞ սուկի տուիք հարցուց, 15 ըսինք. վայ ա-նիրաւ վայ:

Սոյն խօսակցութիւն տեղի ունեցած ժամանակ 3 հատ խարբերոցի Հայեր ալ ներկայ էին, որք ամերիկայ գալու նպատակաւ անդ կը սպասէին. հաճի Մարտիրոսի ճանկի մէջ ինկած էին 3—4 ամիսէ ի վեր և նա դրամապէս կողպատելէն վերջ խեղճերի կեանքն վտանգի ենթարկած է

Ա. Մ. ԲԱՂԴ

ՆՅՈՒՆ ԵՒ ՆՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— «ԹԱՅՄՁ»-ին կը հեռագրեն Կ. Պոլսէն թէ, երբ Առլթանն իմացաւ թէ ի հանդիսի գահակալութեան նոր խորհրդին ի Գահիրէ՝ թուրք ազգային նուազն նուազուած է բրիտանական և եգիպտական զօրաք կողմանէ և թէ սուլթանի անունն կեցցէներով ողջունուած է գնդերէն, իւր յատուկ քարտողարներէն մին յղեր է անգղիական դեսպանատունն բացատրելու համար իւր շնորհակալութիւններն այս քաղաքավարական ցոյցերուն նկատմամբ:

— Պարսիկ կառավարութիւնն որոշած է գրաքննութեան ենթարկել այսուհետեւ Թեհրանի մէջ հրատարակուող հայերէն և ռուսերէն գրուածները։

— ԱՂԵՏԱԼԻ ԱՐԿԱՅԻ Ի ԹԻՖԼԻՉ. — Յունվար 6ի ջրօրհնէքի առիթով օրն սարսափելի արկած պատահեցաւ մերազնեայց ի Թիֆլիզ։ Իբր 20 հազար հոգի ներկայ էր խաչն ի ջուր ձգելու արարողութեան առթիւ։ Առժամեայ փայտէ կամուրջ մի շինուած էր Կուր գետի վերայ, ուր պիտի ձգուէր խաչն, բայց կամուրջն բաւական զօրաւոր չլինելով՝ կոտորեցաւ և 500 մարդիկ թափեցան Կուր գետին մէջ։ Անհկարողքի ի արկածին ահաւոր տեսարանն։ Առաւել քան քառասուն հոգի, այր, կին, մանուկ խեղդուած են, թաղ վիրաւորեալներն և խեղեալներն։

Բազմութեան մէջ գտնուեցան լողալ գիտցող արիասիրտ մարդիկ որք գետն նետուելով փրկեցին ստոյգ մահէ բազում վտանգեալներ։ Այս քաջերու շարքում կը յիշուին Ղուկաս Աղապէսեանց, ծերունի Յարութիւն Ասատուրեան որ մէկ երախայ և ուրիշ չորս հոգի փրկեցին է, ծերունի Ղազար Ղարիբեան որ մի քանի հոգի ազատեց է։ Յիշատակութեան արժանի է նաև այն Թուրքն որ, որպէս Նոր-Դար կը պատմէ, փրկած է իւր պարտատէրն եղող Հայ մի։ Սա թրքին ձուռն ոտքերէն կը բռնէ և գլուխն ջրէն վեր կը հանէ։ Թուրքն կը տեսնէ թէ այդ խեղդուողին ինքն հազար թուպի տալիք ունի։ «ձեռքդ տուր, ձեռքդ տուր» կը կանչէ նմա և ձեռքէն բռնելով կը հանէ ցամաք, կը ցամքեցունէ, ձիուն վրայ հեծցունելով իւր տուն կը տանի։ Հետեւալ օրն երախտագէտ Հայն Թրքին աչքին առջև կը պատուէ նորա պարտամուրհակն։

ՆԱԽԱԿԱՏԻՔ ԲՈՂՈՍՊԵՍՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԻՍԻՆ Ի ՇԻՔԱԿՈ։ — Մեր թղթակից կը գրէ Շիքակոյէն. «Յառաջիկայ Հոկտ. 12ին ծէքսըմ Փարքի մէջ մեծ շքով պիտի կատարուի ցուցահանդիսին նաւակատիքն։ Գործադիր Ժողովն որոշած է որ հանդիսին ներկայացողք ու է գրամական վճարումէ ազատ լինին։ Գեր. Ֆիլիփս Պրուքս, Մասաչուսէցի եպիսկոպոսն պիտի մատուցանէ նուիրման աղօթքն, ապա ցուցահանդիսին տեղեկագիրն պիտի կարդացուի, և յետոյ պիտի լինի շէնքերու ընծայումն Գոլումպեան Յանձնախմբին նախագահէն առ Միացեալ Նահանգաց Նախագահն։ Վերջապէս նուիրման ճառն պիտի խօսի Ուիլեմ Բ. Փ. Պրիքինըլի, Բէնթլըքիցի։

Այս արարք պիտի ընդմիջուին քայլերգներով և նուագածութեամբը։»

Տէ Մուռնէն կը գրէ մեզ Տի. Պ. — «Ձեր ազգօգուտ կիսամսեայն իւր ճոխ պարունակութեամբ, աղնիւ լեզուով և ամենընտիր սճով յերաւի ամեն կարգի և աստիճանի պանդխտաց համար հաճելի և օգտակար թերթ մ'ըլլալով՝ արժան է որ բոլոր հին և նոր աշխարհ ցան ու ցրիւ բնակող հայ գաղթականութեան սէրն և կատարեալ վստահութիւնն վայելէ, ինչպէս՝ կը տեսնենք թէ սկսած ալ է վայելել։ Ես չեմ կարող բացատրել ձեզ խօսքով թէ որպիսի միութարութիւն կը պարգեւէ ինձ «ՀԱՅԳ» ամեն անգամ որ կուգայ խօսիլ ինձ զՀայրենեաց, ներշնչելով նոր գաղափարներ և խորհուրդներ և արծարծելով մեծավառ զհուր սիրոյս առ թշուառ Հայրենիք մեր, և ո՛հ, որքան կ'օրհնեմ ձեր անուն և անձ որ հէք պանդխտին խրատաւ, միութարիչ, թոյլ տուէք, խնդրեմ, որ ըսեմ լուսաւորիչ բառին բուն նշանակութեամբը, անձնուէր ընկե՛ր և հաւատարիմ բարեկամն էք եղած միշտ։»

— ՀԱՅԿԱՅԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Փետր. 20ի նիստն տեղի ունեցաւ իւր սովորական Սրահի մէջ թ. 161 ճոգ էփինիւ։ Ժողովն զբաղեցաւ հետեւեալ երեք խնդիրներով — թէ Միութեանս վեցերորդ տարեգարծի հանգէսն ինչ կերպով պէտք է կատարուի — թէ Միութեանս մատենադարանն ինչ եղանակաւ կրնայ աւելի մատչելի և օգ-

տակար լինիլ իւր անդամոց և բոլոր գաղթականութեան — թէ ինչ արդիւնք ունեցաւ խաբուած ազգայնոց վերադարձին համար եղած ջանքն։ Ուրախ եղաւ Միութիւնն տեղեկանալով այս մասին թէ Չարաթընէն վերադարձած են մեր 24 հայրենակիցք, որոց ուղեւորութեան նպաստեց Միութիւնն 40 թալէռի օգնութեամբ ի ձեռն ժրջան և անձնուէր անդամին Տր. Ա. Այվազեանի։

Հայկ. Միութեան նիստերն կանոնաւորապէս տեղի կունենան ամեն ամսոյ Ա. և Գ. շաբաթ երեկոյներն։ Եթէ ամիսն ունի հինգ շաբաթ օր, հինգերորդ շաբաթ երեկոյն ևս նիստ տեղի կ'ունենայ, որոյ հետեւութեամբ յաջորդ նիստն ալ տեղի կունենայ մէկ շաբաթ յետոյ, այն է յաջորդ ամսուն առաջին շաբաթ երեկոյն։

Միութեան յաջորդ նիստն տեղի պիտի ունենայ Մարտ 5ին, ուր Տի. Զինիշեան, ընթացաւարտ Բոպէթթեան վարժարանին ի Կ. Պոլիս, պիտի ատենախօսէ։

ՄԱՀԱԳՈՅԺ ԱԻԱԳ ԳԱՐԱՃԵԱՆԻ. Տի. Մ. Պաղտատարեանէ ստացանք հետեւեալ նամակն, Փետր. 25 թուականաւ Տրէյք համալսարանէն Տէմուանի. «Դարձմի պանդուխտ հայ զոհ գնաց թշուառութեան անխուսափելի հետեւներին։ Յունվար 14ին կնքեց իւր մահկանացուն Տի. Աւագ Ս. Դարաճեան՝ ընկի Հաճի Գիւղցի մերձ Ամասիոյ։ Դարաճեան վախճանեցաւ Շիքակոյի Աղքատանոցում, ուր ընդունուած էր նա մի քանի ամիս առաջ։ Ես ծանոթաբար էի Աւագի հետ ի Մինիափոլիս, 1890ին ուր նա շէնքի մի գիշերապահն էր հիւժեալ մարմնով բայց հանճարեղ մտք։ Մարտունի գոլէճի ընթացաւարտ մ'էր, աշխոյժ և սիրելի երիտասարդ, իբր 25 տարեկան։ Ընթերցողք պիտի յիշեն նորա մինա մակն կարեւոր խնդրոյ մի վերայ գոր հրատարակած է «Հայք»ի անցեալ տարւոյ էջերում, ի թիւ 5դ։»

— «ԱՐՁԱԳԱԿԻ»-էն կը տեղեկանամք թէ նոր տարւոյ առթիւ Ձարն պետական խորհրդականի աստիճան շնորհեք է ՆՐԵՍԻՍ ՆՐՍԷՍԵԱՆՏԻ, որ արտասովոր ուսուցչապետ է Մոսկուայի կայսերական համալսարանի իրաւաբանական շրջանակի մէջ։ Մի և նոյն աստիճանին արժանացեք է նաև Երեւանի Նահանգական դատարանի անդամ ԱԻԵՏԻՍ ԵՐՁՆԿԵԱՆՏ։ Ս. Վլատիմիրի Գ. աստիճանի չքանչան շնորհուած է ՄԻԲԱՅԷԼ ԴՕԼՈՒՍԱՆԵԱՆՏԻ, որ գինուորական մ'է։ Ղարսի ումրածիք զօրաց կապիտան Սողոմոն Աբամելիքեանի շնորհուած է Ս. Աննայի չքանչան Բ. աստիճանի։ Ղարսի Նահանգական վարչութեան թարգմանչի պաշտօնակատար Գրիգոր Զա. Ուսեանցի՝ Ս. Ստանիսլաւի չքանչան Գ. աստիճանի։

— Կ. Պոլսոյ մէջ կը հրատարակուին այժմ տասներկու հայ թերթեր — «Հայրենիք» «Արեւելք» «Մասիս» «Մանգուէլի էֆքեար» «Աւետարներ» «Աւետարներ Մանկանց» «Բիւրակին» «Ծաղիկ» «Ճէրիտէի Շարքիյէ» «Մէճմուաի ախպր» «Պատկեր» «Փունջ»։

— Ուսաստանի մէջ կը հրատարակուին 10 թերթեր — «Մշակ» «Արձագանք» «Նոր-Դար» «Արարատ» «Աղբիւր» «Տարազ» «Արաքս» «Մուրճ» «Հանգէս Գրական և Պատմական» «Մանկավարժական Հանդէս»,

ՇԱՀԱԴՈՐ ԳՈՐԾ ՄԻ

ԱՆԳՂԻԵՐԷՆ ԽՕՍՈՂ ՀԱՅԵՐՈՒ ՀԱՄԱՐ

WORLD MANUFACTURING COՆ պատրաստ է մինչև քսան հոգիներ գործածել իբրեւ էճենթ։

Յարատե գործ կը խօստացուի։

Պայմաններն գոհացուցիչ են։

Դիմել կամ գրել առ էմմանուէլ Յ. Բադլեան ժամն առաւօտետն 8—9

214 FLATBUSH AVE. BROOKLYN, N. Y.

ՄԵԼՈՒՄ ԵՆՈՒՄ

Պատիւ ունի ծանուցանել թէ երկար տարիներու փորձառութեան շնորհիւ ամենեւն ապահով և աժան գըներով փոխանակադիր տալ կարող է խաբերդու և Պուլսոյ վիայ, և փարա կամ թիքէթ խրկել Մարսիլիա:

Ունի նաև ընծայի շատ յարմար Տաճկական Ձինական, Հնդկական և Ճարճական ամեն տեսակ ապրանքներ: Ծանօթութիւն.— Գործերնու խաթրին համար ստիպուած չեմք մեր անունը կորսնցնել և օտար անուն մը կրել, մենք բուն Նահիկեան ենք: Մեզ գրել հետեւեալ հասցէիւ

A. N. Nahikian, 39 Pleasant St. Worcester, Mass.

Հայեր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ու է արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ աժան:

ՄՇԱԿ

Գրականական և քաղաքական լրագիր, կը հրատարակուի չաբաթն երեք անգամ: Տարեկան բաժնեգրին է 10 ռուբլի: Հասցէն

Redaction du Journal «Mschak» Tiflis, RUSSIE

ԱՐՁԱԳԱՆՔ

Գրականական և քաղաքական լրագիր, կը հրատարակուի չաբաթն երեք անգամ նոյնպէս ի թիֆլիս: Տարեկան բաժնեգրին է 10 ռուբլի:

ԱՂԲԻՐ ամսագիրն և ՏԱՐԱԶ չաբաթաթերթն կը հրատարակուին նոյն ուղղութեամբ և ծրագրով, երկուքն ալ պատկերազարդ և կրթական հրատարակութիւններ են: «Աղբիւր»ի տարեկան բաժնեգրին է 4 ռուբլի, Տարազինն՝ 7: Կը հրատարակուին ի թիֆլիս:

Ով որ երկու թերթերուն եւս բաժանորդ լինի, կ'ընդունի մէկ տարուան մէջ 51 պատկեր իւր պրէմիա:

ՆՈՐ ԴԱՐ

Քաղաքական—գրականական ամենօրեայ թերթ, կը հրատարակուի թիֆլիսում: Տարեկանն է 10 ռուբլի: Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրներէ բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանք:

— «ՀԱՅՔ»-ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թաւէն 5 սէնթի:

Հետեւեալ գրքերն կ'ընան գնուիլ, գինն կ'ամսիկ վճարելով, «ՀԱՅՔ»-ի խմբագրատնէն, 202w. 23d St. New York

ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ Գրեաց Մ. Սմբատ Գաբրիէլեան, 1888, (նախապէս հրատարակուած «Արեւելք»-ի մէջ) 61 էջ. գինն է 20 սէնթ կամ մէկ ձրամբ:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, ի պէտս Ազգ. Վարժարանաց. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան, 1891, 128 էջ, գին մէկ թաւէն կամ հինգ ձրամբ: Եթէ վարժարանաց մէջ իրբեւ դասագիրք գործածելու համար ուզուիմ բազմաթիւ օրինակներ միւս անգաման հարկերն յիսուծ գեղջ կը լինի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՏԱԶԵՐՆ

(Չափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարզարան 128 երեսներէ բաղկացեալ և 36 ձևերով բացատրեալ, ինքնուուրոյն գրքոյկ մ'է գինւորական մարզանաց և մարտագիտական սկզբանց:

Գինն որեւէ հասցէի համար մէկ թաւէն կամ հինգ ֆրանք: Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարկւրին 25 գեղջ կը լինի: Կրնայ ստացուիլ «ՀԱՅՔ»-ի խմբագրութենէն կամ ուղղակի հեղինակէն, հետեւեալ հասցէով, G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՉԱՅՆ ՄԻ ԱՐԱՐԱՏ ԼԵՌՆԷՆ, անգղիերէն տետր մ'է 54 երեսներէ բաղկացեալ, որ կը պարունակէ հեղինակին - Տիար Միհրան Պաղտասարեանի - կենսագրութիւնն, Օոմանեան Պատմութեան վերայ ակնարկ մի և և Հայոց Պատմութեան բովանդակութիւն մի: Տետրին վերջին երեսներն նուիրեալ են Հայոց պէտքերն և բաղձանքն ցուցնելու:

Այս տետր կը վաճառուի 50 սէնթի. գինը հեղինակին հետեւեալ հասցէիւ — Mr. M. Baghdasarian, 111 Walnut St. Des Moines Iowa, U. S. A.

WORCESTER FIVE CENTS SAVINGS BANK

No. 246 Main St. Worcester, Mass.

Այս պանքան մինչև հինգ սէնթի փոքր գումար կ'ընդունի: Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսաց առաջին օրէն կը հաշուի դրամի շահն 800ին 4: Պանքային ժամերն են 9էն 1, և 2էն 4: Շաբաթ օրերն՝ 9էն 1:

E. B. STODDARD, President.

J. STEWART BROWN, Treasurer.

O. F. HARRIS

ԵՏԵՄԵԱՔՈՅԷ

476 Main St. Worcester, Mass.

ՎԱՐՊԵՏ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒ ԲԺԻՇԿ Է

ԱԿՈՍՆԵՐՈՒ

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ՊԵՂԱՔԱՐԵ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE

NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արեւելեան կողմն:

—Ընտիր Գաղղիական խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱՐԲԻԷԼԵԱՆ